

ԼՂՀ հռչակման 17-ամեակի առիթով բազմահազարանոց հանրահավաք Երեւանում

***Ադրբեջանը պետք է ստորագրի ուժի կիրառումը բացառող
փաստաթուղթ***

***«ԼՂՀ միջազգային ճանաչումը անվտանգութեան
երաշխիք»***

ԵՐԵՎԱՆ (2 սեպտեմբերի 2008թ., Yerkir.am «Երկիր») -- ԼՂՀ անկախութեան 17-ամեակի կապակցութեամբ ՀՀ Դաշնակցութիւնը սեպտեմբերի 2-ին Մատենադարանի դիմաց կազմակերպել էր հանրահավաք՝ «ԼՂՀ միջազգային ճանաչումը անվտանգութեան երաշխիք» կարգախօսով: «Արցախը Հայաստան է», «Ազատութիւնը բոլորի համար է: Չկան արտօնեալ ազգեր», «Ոչ երկակի ստանդարտներին», «Խաղաղ լուծումը այլընտրանք չունի» եւ այլ ցուցապաստառներով հանրահավաքին մասնակցում էին հազարաւոր քաղաքացիներ ՀՀ տարբեր մարզերից, Արցախից, Ջաւախքից եւ Սփիւռքից:

Հանրաւաքը վարում էր ՀՀ-ի Հայաստանի Գերագոյն մարմնի անդամ, ՀՀ Ազգային ժողովի փոխնախագահ Հրայր Կարապետեանը: Ելոյթներ ունեցան ՀՀ ԱԺ Պաշտպանութեան, Ներքին գործերի եւ ազգային անվտանգութեան յանձնաժողովի նախագահ Արթուր Աղաբեկեանը, ՀՀ Բիւրոյի անդամ եւ ՀՀ-ի խորհրդարանական խմբակցութեան ղեկավար Վահան Յովհաննէսեանը, ՀՀ Բիւրոյի անդամներ Լեւոն Մկրտչեանն ու Աղուան Վարդանեանը: Եզրափակիչ խօսքով հանդէս եկաւ ՀՀ-ի Հայաստանի Գերագոյն մարմնի ներկայացուցիչ եւ ՀՀ ԱԺ Արտաքին յարաբերութիւնների յանձնաժողովի նախագահ Արմէն Ռուստամեանը:

Ելոյթ ունենալով՝ ՀՀ-ի Բիւրոյի անդամ Աղուան Վարդանեանը նշեց, որ ԼՂ-ն Կոստովոյից, Օսէթիայից, Աբխազիայից եւ Հիւսիսային Կիպրոսից շատ անելի իրաւունք ունի ինքնորոշման՝ թէ քաղաքական, թէ իրաւական, թէ պատմական ու բարոյական առումներով: Ըստ նրա, ԼՂ-ն կայացած պետութիւն է, եւ նրանից բան ունեն սովորելու շատ ու շատ ճանաչուած պետութիւններ: Իսկ բարոյափոքեանական առողջ մթնոլորտի, ժողովուրդ-իշխանութիւն վստահութեան առումով սովորելու բան ունի նաեւ Հայաստանը: «Առանց Արցախի, առանց Հայաստանի, առանց հայութեան շահերը հաշուի առնելու Հարաւային Կովկասում չի կարող կայուն խաղաղութիւն հաստատուել: Այո, աշխարհի համար նախը կարելոր գործօն է: Բայց չպետք է մոռանալ նաեւ՝ նախը դիրաւառ հեղուկ է: Սա է մեր ուղերձը Ադրբեջանի ռազմատենչ նկրտումներին», - նշեց ՀՀ-ի Բիւրոյի անդամը:

«Հարաւային Օսիայի շուրջ ծաւալուած իրադարձութիւնները ապացուցեցին, որ ռազմական ճանապարհով ԼՂ հիմնախնդիրը լուծելու Ադրբեջանի մշտնջենական ձգտումն այլեւս դատապարտուած է: Հարաւային Օսիայի դէպքերն ուղղակի կերպով հաստատեցին նաեւ այն անժխտելի իրողութիւնը, որ տարածաշրջանի կոնֆլիկտների նկատմամբ կիրառուող երկակի ստանդարտները կամ ազգերի ինքնորոշման ստորադասումը տարածքային ամբողջականութեանը բերում է հումանիտար աղետի, խլում է հազարաւոր մարդկանց կեանք, մի քանի ժամում մի ամբողջ ժողովուրդ կարող է դառնալ փախստական ու անպաշտպան», - ելոյթում նշեց ԱԺ պաշտպանութեան,

ներքին գործերի եւ ազգային անվտանգութեան յանձնաժողովի նախագահ Արթուր Աղաբեկեանը եւ յաւելեց, որ Արցախը եւ քաղաքական եւ իրաւական եւ պատմական ու բարոյական առումներով վաղուց ապացուցել է ազատ ապրելու իր իրաւունքը՝ ի հակառակ Ադրբեջանի կողմից իրականացուող բռնութիւնների ու պարտադրուած պատերազմի: Պատգամաւորի խօսքերով՝ ԼՂՀ կարգաւորման շուրջ գործընթացների անարդիւնաւետութիւնը պայմանաւորուած է այն բանով, որ ԼՂի-ն լիարժէք չի մասնակցում բանակցութիւններին. «ԼՂՀ հիմնախնդրի կարգաւորման ներկայ փուլում միջազգային հանրութեան առջեւ որպէս առաջնահերթ խնդիր պետք է բարձրացուի հակամարտող կողմերի միջեւ ուժի կամ ուժի սպառնալիքի կիրառումը բացառող իրաւական փաստաթղթի ստորագրման հարցը: Նման փաստաթուղթը պետք է բխի 1994թ. գինադադարի համաձայնագրից, որի ստորագրող կողմերն են ՀՀ-ն, Ադրբեջանը եւ ԼՂՀ-ն»: (Ա. Աղաբեկեանի խօսքը տեսնել նաեւ առանձին)

ՀՀ-ի Հայաստանի Գերագոյն Մարմնի ներկայացուցիչ Արմէն Ռուստամեանը ելոյթ ունենալով՝ նշեց. «Տարածաշրջանային վերջին իրադարձութիւնները փաստեցին՝ հակամարտութիւնների լուծման խաղաղ ճանապարհը, որքան էլ այն լինի դժուարին եւ պահանջի կողմերից հետեւողական ջանքերի գործադրում եւ քաղաքական կուռ կամքի դրսեւորում, այլընտրանք չունի: Այլընտրանք չունի յատկապէս այն պատճառով, որ ուժային լուծումը դատապարտուած է ձախողման, եւ նրա միակ արդիւնքը լինելու է աւելի մեծ մասշտաբների հումանիտար աղետը»: Նրա խօսքերով՝ ռազմական ճանապարհը անխուսափելիօրէն յանգեցնելու է հակամարտութեան սահմանների ընդլայնմանը՝ վերածելով այն շահագրգիռ գերտերութիւնների եւ ուժային կենտրոնների միջեւ առճակատման:

ՀՀ-ի Բիւրոյի անդամ Վահան Յովհաննիսեանը խօսեց Արցախի, ջաւախահայութեան եւ Վրաստանում տեղի ունեցող վերջին իրադարձութիւնների մասին: Աժ փոխնախագահ Հրայր Կարապետեանը ելոյթում նշեց, որ պետք է պայքարել յանուն ԼՂՀ միջազգային ճանաչման եւ յանուն ԼՂՀ ինքնորոշման իրաւունքի: Իսկ ՀՀ-ի Բիւրոյի անդամ Լեւոն Մկրտչեանը անդրադարձաւ հայ-թուրքական յարաբերութիւններին:

Հանրահաւաքի մասնակիցները միաձայն ընդունեցին յայտարարութիւն, որի տեքստը բերում է ստորեւ.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Արցախեան շարժման 20-ամեակի եւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան հռչակման 17-ամեակի առիթով 2008թ. սեպտեմբերի 2-ին ՀՀ Դաշնակցութեան նախաձեռնութեամբ Երեւանում կայացած հանրահաւաքի մասնակիցներս արձանագրում ենք.

-- Հարաւային Կովկասում վերջին շաբաթների պատերազմն ու իրադարձութիւնները նոր իրավիճակ են ստեղծել տարածաշրջանում:

-- Ակնյայտ է, որ եթէ միջազգային հանրութիւնը այսուհետ չկարողանայ բացառել ուժի կիրառումը, ապա անկանխատեսելի զարգացումները կարող են աղետալի լինել: Կատարուածը նաեւ փաստում է, թէ որքան վտանգաւոր է երկակի ստանդարտների կիրառումը:

-- ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկրները վերջին շրջանում առանձնաբար կամ միասնաբար ճանաչելով Կոսովոյի, Աբխազիայի եւ Հարաւային

Օսիայի անկախությունը՝ փաստել են միջազգային յարաբերություններում ազգերի ազատ ինքնորոշման իրաւունքի գերակայութիւնը:

-- Միջազգային հանրութեան կողմից Արցախի ժողովրդի ինքնորոշման եւ ազատ ապրելու իրաւունքի յարգումը այլընտրանք չունի: Արցախի ժողովուրդը բազմիցս արտայայտել է իր կամքը՝ ապրելու Ադրբեջանից անկախ: Արցախի ժողովուրդն իր ինքնորոշման իրաւունքը կիրառել է հիմնուած միջազգային իրաւունքի սկզբունքների եւ Խորհրդային Միութեան Սահմանադրութեան վրա: Լեռնային Ղարաբաղը երբեք մաս չի կազմել անկախ Ադրբեջանին: Խորհրդային Միութեան փլուզման հետ աւարտուել է Խորհրդային Ադրբեջանի լուծը Լեռնային Ղարաբաղի վրա:

-- Ղարաբաղ-ադրբեջան պատերազմի մէջ նախայարձակուողը եղել է Ադրբեջանը. Արցախը պաշտպանել է իր անվտանգ ապրելու իրաւունքը եւ արձանագրել յաջողութիւններ. պատերազմի ու դրա հետեւանքների պատասխանատուն Ադրբեջանն է:

-- Արդէն 17 տարի է, որ Լեռնային Ղարաբաղի Յանրապետութիւնը ապրում է որպէս ժողովրդավար պետութիւն, իր պետական համապատասխան կառոյցներով եւ տեղական ինքնակառավարման մարմիններով:

-- Բռնի ուժով Արցախը վերանուաճելու ադրբեջանական նկրտումները անհեռանկար են եւ տարածաշրջանը էլ աւելի անկանխատեսելի ցնցումների են տանելու:

-- Փաստացի ճանաչելով Լեռնային Ղարաբաղի Յանրապետութիւնը, տնտեսական եւ այլ բնագաւառներում համագործակցութեան պայմանագրեր ստորագրելով նրա հետ, Յայաստանի Յանրապետութիւնը ցարդ իրաւականօրէն չի ճանաչել ԼՂԿ-ն՝ մեկնելով բացառաբար խնդրի խաղաղ կարգաւորման բանակցութիւնների ոգուն հաւատարիմ մնալու իր կեցուածքից:

-- Տարածաշրջանին չի կարող ձեռնտու լինել Եւրամիութիւն-ռուսաստան-ամն յարաբերութիւնների բախումնային սրումը. անհրաժեշտ է առկայ խնդիրները երկխօսութեան ճանապարհով կարգաւորելու ուղիներ գտնել: Այդ ջանքերին կարող է ու պետք է միանայ նաեւ Յայաստանը:

Յանրահաւաքի մասնակիցներս հաստատում ենք,

1) Արցախի խնդրի կարգաւորման բանակցութիւնները կարող են արդիւնաւետ լինել եւ խաղաղութեան պահպանմանը նպաստել միայն այն դէպքում, երբ Ադրբեջանը Յայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի Յանրապետութիւնների հետ ստորագրի ուժի կիրառումը եւ ուժի կիրառման սպառնալիքը բացառող իրաւական փաստաթուղթ:

2) Յայաստանի Յանրապետութիւնը Լեռնային Ղարաբաղի Յանրապետութեան հետ պետք է ստորագրի պայմանագիր՝ հանդէս գալով որպէս Լեռնային Ղարաբաղի Յանրապետութեան անկախութեան եւ անվտանգութեան երաշխաւոր:

3) ԶԶ իշխանութիւնները պետք է նախատեսեն ԼՂԿ պաշտօնական ճանաչումը, եթէ Ադրբեջանը ռազմական ճանապարհը շարունակի համարել կարգաւորման ընդունելի միջոց կամ իր գործողութիւններով առաջացնի սպառնալիք բանակցային գործընթացի համար:

Մենք յայտարարում ենք,

ա) Յայաստանն ու Արցախը չեն հրաժարուելու իրենց անվտանգութեան երաշխիքներից:

բ) Յայաստանի ու Արցախի անվտանգութեան ապահովման հարցում հայութիւնը միասնական ու միակամ է. որեւէ ներքաղաքական խնդրի չպետք է սպառնալիք դառնայ մեր պետականութեան գոյութեանն ու անվտանգութեանը:

գ) Հայութիւնը համախմբելու եւ արտաքին վտանգներից լաւագոյնս պաշտպանուելու երաշխիքը երկրում բարեփոխումներն անշրջելի դարձնելն է, ժողովրդավարութեան խորացումը եւ արդարութեան հաստատումը:

**2008թ. սեպտեմբերի 2-ի
Հանրահաւաքի մասնակիցներ
ք. Երեւան**

#####

MD-2008-16